

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՅԻՆՆԵՐ.

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՅԻ.

Անցեալ համարում հաղորդել էինք, որ ասորական մի պատգամաւորութիւն Պետերբուրգ գալով՝ խնդիր է առաջարկել, Պարսից և Տաճկաց սահմանազխի վերայ պարող նետորական ասորիներին Օրթոդոքս եկեղեցւոյ ծոցն ընդունել, Ս. Սինոդն յարգեց այդ խնդիրը և մարտի 25-ին, Աւետեաց տօնին, տեղի ունեցաւ հանդիսաւոր ընդունելութիւնը, Անշուշտ հետաքրքիր կլինի շատերին իմանալ, թէ ինչ կարգով է կատարել Ռուսաց եկեղեցին այդ արտասովոր արարողութիւնը, Համառօտակի յառաջ կրեւրեք նորա նկարագիրը՝ Церк. Вѣстникъ թերթից քաղելով.

Աւետեաց տօնի նախորդ օրը, ժամը 11-ին, սովորականից վաղ նիստ կազմեցին ս. Սինոդի անդամները, Օրթոդոքս եկեղեցւոյ ծոցը մտնել ցանկացող Մար—Իոնա եպիսկոպոսը կանգնեց դրան առաջ, իրեւ դուռը բաղխող խոնարհ խնդրարկու, Ս. Սինոդի քարտուղարը զեկուցում արաւ այս մասին, և նախանդամ Սրբ. Պալլադիյ Ս. Պետերբուրգի միտրոպոլիտի հարցի վերայ բոլոր անդամները հաւանութեան նշան տուին, որ խնդրարկուններս ընդունուի, նորան բերին և կանգնեցրին այն տեղում, ուր եպիսկոպոսութեան ընծայեալներն են կանգնում, ապա կարգալ տուին հին—ասորերէն լեզուով հաւատոյ հանգանակը, որից յետոյ նորա առաջնորդ Թէոֆիլակտ արեղան կարգաց նոյնը սլաւոներէն լեզուով, և Իոնա եպիսկոպոսը ստորագրեց այն՝ հրաժարելով այսպէս միանգամայն նետորական ուսումից, Այն ժամանակ Սրբ. Ն. խանդամը հարցրեց. «Ընդունո՞ւմ էք Իոնա եպիսկոպոսին ի հաղորդութիւն ուղղափառ եկեղեցւոյ»: Սրբ. Իոնանիկիյ, Վիսլի միտրոպոլիտոյ, պատասխանեց. «Զ. Տիեզ. ժողովի 95 կանոնի հիման վրայ արժան եմ համարում, որ Իոնա եպիսկոպոսը և իւր հետ եղողները ընդունուին՝ իրենց աստիճանները պահելով, Մնացած անգամները համաձայնութիւն յայտնեցին, և Իոնա եպ. ը սեղանի վրայ դրած խաչը համբուրելով դուրս ելաւ, որով ընդունելութիւնը ձեւականապէս կատարուած եղաւ, իսկ բուն արարողութիւնը մնաց յաջորդ օրուան պատարագին.

Արարողութիւնը կատարեց՝ օր առաջ հաստատուած և առանձին տետրակով հրատարակուած կարգի համաձայն, Ս. Պետերբուրգի միտրոպոլիտ Սրբ. Պալլադիյ, Աղէքսանդրո—Նիկիկիյ վանքի մայր տաճարում, ուր այդ հազուադէպ հանդէսը տեսնելու համար ահագին բազմութիւն էր ժողովուել Բացի Իոնա եպիսկոպոսից ընդունելութեան մասնակցողներն էին, Եղիա վարդապետ, Գէորգ Բէդ-

ժանով և Սարգիս Բաղալով քահանաներ, և Յակոբ Բարազանով սարկաւագ, որոնք կանգնած էին տաճարի դրան առաջ, իւր Սրբ. Միտրոպոլիտը իւր փոխանորդներով և բազմութիւ այլ հոգևորականներով շրջապատուած, նախ քան պատարագի սկսուելը, նոցա հանդէպ ելաւ և հարցրեց, թէ արդեօք կամենո՞ւմ են հրաժարուել նետորական դաւանութեան զեղծումներից և մոլորութիւններից, և Ուղղափառ—կաթոլիկէ եկեղեցւոյ հաւատը դաւանել. «Կամենում եմ», պատասխանեցին խնդրարկուները, Ապա մի համառօտ աղօթք կարդալուց յետոյ Սրբ. Միտրոպոլիտը հարցրեց, «Հրաժարո՞ւմ ես այն մոլար ուսումից, թէ մեր Տէր Երիսուսի մէջ երկու բնութիւններ չեն միայն Աստուածային և մարդկային, այլ և երկու ներակայներ (հիւպոստազիս), Աստուածային և մարդկային և հրաժարո՞ւմ ես նետորի և նորա բոլոր հետեւողների ուսումից», պատասխանը եղաւ. «Հրաժարում եմ», Հարցում. «Հրաժարո՞ւմ ես այն մոլար ուսումից, թէ Ամենասուրբ Կոյս Մարիամին, որ ճշմարտութեամբ ծնաւ Քրիստոսին՝ մեր Աստուծուն, պէտք է Աստուածածին անուանել, այլ միայն Քրիստոսածին», պատասխան. «Հրաժարում եմ», Հարցում. «Կամենո՞ւմ ես միանալ Սուրբ, Ուղղափառ, Կաթոլիկէ, Արեւելեան եկեղեցւոյ հետ, և խոստանո՞ւմ ես հնազանդ լինել նորան», պատասխան. «Կամենում եմ և խոստանում ի բոլոր սրտէս, Այնուհետև խնդրարկուները հաւատոյ հանգանակն առաջին, խոստացան ընդունել 7 տիեզ. ժողովները և նոցա հաստատած դաւանութիւնն ու կանոնները, պատուել ս. պատկերները ըստ մտաց Ուղղափառ եկեղեցւոյ, և ս. եկեղեցւոյ բոլոր օրէնսդրութիւններն ու աւանդութիւնները պահել,— և Սրբ. միտրոպոլիտը եմիփորոնի քղանցքը նոցա վերայ դնելով՝ ասաց. «Մտէք ուղղափառ եկեղեցի և՛ մոլորութիւնները բոլորովին ի բաց թողնելով, մընացէ՛ք նորա մէջ, պաշտեցէ՛ք Ամենակալ Հօրը, նորա Արդի Երիսուս Քրիստոսին և Ս. Հոգուն՝ Միանական և Անբաժանելի Երրորդութեանը», Ապա սաղմոսերգութիւններով առաջնորդեցին նոցա ամբիոնի առաջ, ուր կանգնած էին Ս. Սինոդի անդամները, և սեղանի վերայ խաչ և աւետարան էր դրած, որոնց հանդէպ և հետեւալ խոստումն արին. «Ուղղափառ—կաթոլիկէ հաւատը, որ այժմ յօժարեալամ դաւանում եմ՝ ամբողջ և անխախտ հաստատուն պահել մինչև վերջին շունչս, Աստուծոյ օգնութեամբ, և նորա պատուէրները սրտնաւնդն փութով կատարել կաշխատեմ անաղարտ պահելով ըստ կարելւոյն իմ սիրտը, Ի հաստատութիւն այս խոստման համարում եմ իմ Փրկչի խօսքերն (աւետարանն) ու խաչը աւանդել, Ապա նոցա ծուռք չօրհնել և Սրբ. Միտրոպոլիտը կարգաց քաւութեան աղօթքը, որով և

միութեան արարողութիւնը վերջացաւ, և սկսուեցաւ պատարագը. Պատարագին մասնակից էին * բացի Սրբ. Պալլադիյ միտրոպոլիտից նաև Մոսկվայի նորընտիր միտրոպոլիտ Սրբ. Վլադիմիրը, Ս. Սինոդի երեք այլ անդամներ և նոր միացած Իոնա եպիսկոպոսը, Պատարագից յետոյ Հանդիսաւոր Ճաշկերոյթ տեղի ունեցաւ վանքի սեղանատանը, ուր շատ բարձրաստիճան անձինք ներկայ էին և Ս. Սինոդի Օրբը—պրոկուրորի օգնական Սարգէր կարգաց նորին Վասերական Մեծութեան շնորհաւորական հեռագիրը:

Այն պայմանագիրը, որի հիման վերայ սկսուեցաւ Իոնա եպիսկոպոսի և իւր հետեւողների Ռուսաց եկեղեցւոյ հետ միացման գործը, և որ գրուել է նորա աթոռանիստ Սուպորգան գիւղում 1897 մայիս 24-ին՝ հետեւեալն է.

«Յանուն Հօր և Արդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Հնորճօք կենարար սուրբ Հոգւոյն՝ մենք, Ասորա—բաղդէական ժողովուրդ, նեստորի հետեւողներս վճռում ենք միանալ կրկին Յոյն—Ռուսական Մի, Ճմարիտ, Սուրբ, Ընդհանրական, Առաքելական եկեղեցւոյ հետ՝ միանալ անսուտ և անկեղծ կերպով, ճմարտութեամբ և ուղիղ սրտով, Մեծ Հովուապետի՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի խօսքին համաձայն, թէ «Եղիցին մի հօտ և մի հովիւ» (Յովհ. Ժ, 16), Մեր հայրերն ու պապերը 14 դար սորանից առաջ եկեղեցւոյ միութիւնից անջատուեցան, բայց այսուհետեւ թող այդ բաժանումն ու անջրպետը չլինի մեր նեստորականներին և Ուղղափառների մէջ, Մենք հաւատում ենք և ընդունում: Ա) Գ. Տիեզ. ժողովի վարդապետութիւնը և որոշումներն և Կիւրեղ Աղեքսանդրացու թղթերը, ուստի և միաձայն խոստովանում ենք. «Մի և նոյն Արդի, մեր Տէր Յիսուս Քրիստոսին, կատարեալ Աստուածութեամբ և կատարեալ մարդկութեամբ, նոյնը հօգւով և մարմնով՝ համագոյակից Հօր ըստ Աստուածութեան և համագոյակից մեզ ըստ մարդկութեան՝ ըստ ամենայնի նման մեզ, առանց մեղաց. յառաջ քան յաւիտեան ծնուած Հօրից ըստ Աստուածութեան, իսկ վերջին օրերս՝ մեզ համար և մեր փրկութեան համար, Աստուածածին Կոյս Մարիամից ըստ մարդկութեան, մի և նոյն Քրիստոս, Տիրոջ Միածին Արդին, երկու բնութեամբ՝ անձուկելի, անփոփոխելի, անբաժանելի, անքակտելի ճանաչուած (քանի որ երկու բնութիւնները միացմամբ ո՛չ մի փոփոխութիւն չեն կրում, այլ պահում են իւրաքանչիւր բնու-

թեան յատկութիւնը՝ ի մի դէմ և ի մի ենթակայ զուգուած)»: ո՛չ երկու դէմքի կտրուած կամ բաժանուած, այլ միևնոյն Արդի և Միածին Բանն Աստուած, Տէր Յիսուս Քրիստոս (տ. Կանոնագիրք ս. Առաքելների և ժողովների). իսկ նոցա, որոնք Մարիամ Կոյսին Աստուածածին չեն անուանում, չեն անուանում Մարիամ Կոյսին Տէր Յիսուս Քրիստոսի մայր՝ ծնող մարմնով յաւիտեական Բանին, որ Հայր Աստուծուց է էութեամբ, ի սկզբանէ եղած և վերջին օրերս մարմին առած, որի համար Յովհաննէս աւետարանիչն ասում է. «Եւ Բանը մարմին եղաւ և բնակուեց մեր մէջ, և մենք տեսնք նորա փառքը՝ ինչպէս Հօր Միածնի փառք, շնորհքով և ճշմարտութեամբ լի».—այդպիսի՝ Տիեզերական, Կաթուղիկէ եկեղեցւոյ վարդապետութիւնից շեղուածներին եկեղեցական հաղորդակցութեան չենք ընդունում՝ թող մերժուած լինին:—Բ) Ընդունում ենք եօթ տիեզերական և ինն տեղական ժողովների որոշումները, որոնք վերաբերում են եկեղեցւոյ վարդապետութեան և գործնականին:—Գ) Խոստովանում ենք մեծ Ճշդութեամբ նիկիա—Ա. Պոլսեան հաւատոյ հանգանակը, և նոցա, որոնք փոխում են, կրճատում կամ աւելացնում մի խօսք անգամ նիկիա—Ա. Պոլսեան հաւատոյ հանգանակի պայմանը Տիեզերական Կաթուղիկէ եկեղեցւոյ վարդապետութեան մէջ՝ եկեղեցւոյ, որ ամփոփում է աշխարհի մի ծայրից միւս ծայրը բոլոր աւետարան ընդունողներին՝ այդպիսիների հետ եկեղեցական հաղորդակցութիւն չունինք. թող մերժուած լինին եկեղեցական միութիւնից:—Դ) Ամենասուրբ Հոգւոյ շնորհաց նկատմամբ ճանաչում ենք, որ Տէր Աստուած, էութեամբ մի և գիմօք երբեակ, հաճում է լուսաւորել ընկած մարդկութիւնը և փրկութեան միջոց տալ եօթ Աստուածահաստատ խորհուրդներով. Մկրտութիւն, Դրոշմ, Հաղորդութիւն, Ապաշխարութիւն, Չեղանդութիւն, Ամուսնութիւն և վերջին Օծումն. եօթ խորհուրդներ ս. Հոգւոյ եօթ շնորհարաշխութեանց թուով:—Ե) Պահպանում ենք առանց նորմուծութեան եկեղեցւոյ ս. հայրերի բոլոր գրուածները, համաձայն Է. տիեզ. նիկիոյ ժողովի դաւանական որոշման:—6) Նոքա, որոնք ս. Կոյս Մարիամին, մեր Տէր Յիսուս Քրիստոսի Անարատ Մօր, Քրիստոսածին կամ մարդածին են անուանում՝ համարում ենք այսուհետեւ մոլաբնութեան, Աստուածայայտ վարդապետութեան գիտութիւնից զուրկ, Այդպիսիներին չենք ընդունում եկեղեցական հաղորդակցութեան մէջ. թող մերժուած լինին:—7) Այս որոշումը հոգևորական անձանց և գիւղական հասարակութեանց ներկայացուցիչների ստորագրութեամբ, որոնք կամենում են Ուղղափառութիւն ընդունել՝ ներկայացնում ենք ի բարհայեցողութիւն Յոյն—Ռուսական Ուղղափառ եկեղեցւոյ Սրբազնագոյն Վարիչ Սինոդին, և այս

* Նաեւսին գուցէ յայտնի լի, որ Ռուսաց եկեղեցւոյ մեզ գլխաւոր պատարագի նկատմամբ յիշատակում լինում են աւելի ևս պակաս բռնով օժանդակ պատարագիներ, որոնք անգամի շուրջ յարեալ մասնակցում են արարողութեան:

որոշման՝ Ասորպատական նահանգի Արմիոյ վիճակի Սուպորգանի արքեպիսկոպոս Մաթրան Իոնայի օրհնութեամբ, ստորագրում ենք, և հաստատում, որ մեր խօսքերը ճշմարիտ են և անսուտ, Թող Ամենաբարձրեալ Տէրն Աստուած օրհնէ Ասորա—քաղղէական ժողովրդի միացումն Ուղղափառ եկեղեցւոյ հետ. ամէն, Իսկականն ստորագրել են. «Ասորպատական նահանգի, Արմիոյ վիճակի միտրոպոլիտ Մար—Իոնա, Բողոք Պարսկահայաստան նեստորականների հաւատարմատար միրզա Իւզուֆ Խան Արսէնիոն, նեստորականների պատրիարք Մար—Շիմոնի ներկայացուցիչ Ուրշան աւագ քահանայ Սարով, և ինչ»:

Միացման այս խնդրի առթիւ Церк. Вѣстникъ թերթն աշխատում է մի շարք յօդուածներով ծանօթացնել նեստորական ասորիների անցեալ պատմութեան և ներկայ վիճակի հետ, Ջարմանում ենք սակայն, որ Պրոֆ. Լոպուխինի նման գիտնական անձը հաւատ է ընծայում այնպիսի երեւակայական ենթադրութիւնների, որպիսին է այդ ասորիներին Իսրայէլի կորած 10 ցեղերի ժառանգներ համարելը, Միթէ անտեղութիւն չէ կարծել, թէ ասորա—քաղղէական մեծ ժողովուրդը, որ, Իսրայէլի 10 ցեղերից մի բուռն մարդոց գերութիւն տարած միջոցին, ահագին պետութիւններ էր կազմում և տիրում էր ամբողջ Նախասիային՝ անհետ կորաւ և միայն այն բուռն մարդիկ մնացին, նեստորական ասորիների պատմութիւնն այնչափ որոշ է և յայտնի, որ ներկայացնելու համար այն հարկ չկայ ծայրահեղ ենթադրութիւնների դիմել, Իսկ թէ նոցա ներկայ վիճակի մասին տեղեկութիւն տուողները որչափ գունաւոր կերպով են ներկայացնում իրողութիւնը՝ բաւական է այդ ցոյց տալու համար յիշել, որ անցեալ տարի նեստորականների մօտ ուղարկուած միսիոնարների զլխաւոր Սինդակիյ ռուս քահանան իւր թղթակցութեան մէջ պատմում է, թէ Ռուսաց սահմանից մինչև Թաւրիզ հասնելու համար ամենախիստ զգուշացնող ղեկավարներն իրենք, Այդ խիստ բանուկ ծանապարհով ամեն օր ոչ միայն տղամարդիկ են անցնում, այլ և կանայք՝ եւրոպացի տիկնայք, առանց աներեւակայելի զգուշարութիւնների հանդիպելու:

Նեստորականների մէջ 30 տարիներէ ի վեր եռանդով գործում են Անգլիացի և Ամերիկացի միսիոնարները, որոնք հարիւրաւոր դպրոցներ ունին բացած, նաև մի քանի բարձր դպրոցներ, և նոցա պահպանութեան համար խոշոր գումարներ են ստանում հայրենիքից, 1868 թ.-ին Մար—Շիմոնը մի աղերսալիք նամակով Կենտրոնրթի արքեպիսկոպոսի օգնութեանն էր դիմել, որի հովանաւորութեան ներքոյ և կազմակերպուեցաւ շուտով այդ միսիոնը և կարճ միջոցում, օգնութիւն ստանալով նաև Ամերիկայից, շատ առաջ գնաց, Ռուս

սաց միսիոնի համար հարց է այժմ թէ որչափ յաջողութեամբ պետք է կարողանայ մրցել անգլիականի հետ:

Մարտի 8-ին Պուրսկ քաղաքում տեղի ունեցած սրբապղծութեան մի գեպք մեծ յուզում յառաջ բերաւ ամբողջ Ռուս—Օրթոդոքս ժողովրդի մէջ, Այդ նահանգական քաղաքի մէջ գտնուած Զնամենսկիյ վանքի մայր տաճարում որ յայտնի է նոյնանուն Աստուածածնի հրաշագործ պատկերով՝ անյայտ շարագործներ պայթուցիկ նիւթերի մի արկղ էին դրել, որ զիշեր ժամանակ պոռկեց և ահագին պայթիւն յառաջ բերաւ, Պայթիւնը մեծ աւերումներ է գործել եկեղեցւոյ մէջ, և ենթադրուում է որ եթէ ժողովրդով լի լինէր նա՝ օդի խուռութիւնից կիլիշէր գուցէ և բոլորին իւր տակը կ'ընկնէր, Սակայն Զնամենսկիյ Աստուածամօր հրաշագործ պատկերը, շնայած որ պոռկող արկղը խիստ մօտ է եղել և հաւանականաբար նորան վնասելու նպատակով դրած՝ մնացել է բոլորովին ցերծ և անարատ չընկալաւոր աւերածի մէջ, Ռուս ժողովուրդը Նախախնամութեան ակնյայտնի շնորհն է տեսնում այստեղ և գունդագունդ ուխտ է գնում հրաշագործ պատկերին:

Սրբ. Վլադիմիր Էկզարխի Մոսկվայի միտրոպոլիտ Նշանակուելը նոր տեղափոխութիւններ յառաջ բերաւ Ռուսաց բարձր հոգևորականութեան մէջ, Նոր Էկզարխի փոխարէն Լիտովեան արքեպիսկոպոս Նշանակուեցաւ Պուրսկի Իւլինալիյ եպիսկոպոս, իսկ նորա տեղ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Մոսկվայի հոգևոր ճեմարանի տեսուչ Լափրենտիյ վարդապետը, Տեսչի օգնական Արսենիյ վարդապետը դարձաւ տեսուչ, — Միւս ժամանակ հրաժարուեցաւ ծառայութիւնից Սիււլի հոգևոր ճեմարանի տեսուչ Սիլվեստր եպիսկոպոսը, որ Ռուսաց հոգևորականութեան ամենից աւելի աչքի ընկնող գիտնականներից է՝ մէկը աստուածաբանութեան սակաւակամներից և յայտնի է մանաւանդ իւր բազմահատոր, այդ տեսակի մէջ գրեթէ լաւագոյնը և նորագոյնը համարուող՝ դաւանաբանութեամբ, նորան յաջորդեց տեսչի օգնական Գիմիտրիյ վարդապետը, որ երկու տարի առաջ դեռ աշխարհական ուսուցչապետ էր և կարճ միջոցում արեւոյութիւն և վարդապետութիւն ստացաւ և այսպիսի բարձր աստիճանի հասաւ:

Ռուսաց եկեղեցին կորցրեց կրկին մի քանի նշանաւոր բարձրաստիճան եկեղեցականներ, որոնց մէջ աչքի է ընկնում մանաւանդ Պետերբուրգի Կազանսկիյ մայր տաճարի աւագերէց Լեոնիդով, Հանգուցեալը խիստ գեղեցիկ բարեմասնութիւններով օժտուած անձն էր և սիրելի ու յարգուած

մայրաքաղաքի բարձր հասարակութեան մէջ, *
Վաթառնական թուականներից ի վեր գործում էր
նա եռանդով եկեղեցական—հասարակական ասպա-
րիզի վերայ և թողել է մի շարք ընտիր գրուածներ:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ—ՈՒՆԵՏՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ
(միսսիոն — Heidenmission)
ՆԵՐԿԱՅ ԱԻՃԵԿԵԼ:

Այս վերնագրով մի յօդուած Christliche
Welt թերթի մէջ (N 2, 3, 5), բացի հետա-
քրքրական տեղեկութիւնների հաղորդելուց, ամ-
փոփ գաղափար է տալիս նաև եւրոպացի քա-
րողիչների հեթանոսաց մէջ ունեցած գործու-
նեղութեան և դորա հեռեանքների մասին: Հե-
ղինակը, ուսուցչական Միլլրատ աւետարանա-
կան առաքելութեան ասպարէզ եղող բոլոր
երկիրները երկու կարգի է բաժանում: Ամե-
րիկայում Աֆրիկայում և Աւստրալիայում
հեթանոս ժողովուրդները քաղաքակրթու-
թեամբ այնչափ ստոր են քրիստոնեայ եւրո-
պացիներից, որ եւրոպացի քարողիչը միւսնոյն
ժամանակ քաղաքակրթութիւն տարածող է,
մինչդեռ Արեւելեան Ասիայում՝ Հնդկաստա-
նում Զինաստանում և Ծապենիայում նա
առանձնայատուկ քաղաքակրթութեան և դա-
րաւոր պատմական անցեալի տէր ժողովուրդ-
ներ ունի իւր առաջ, որոնց հետ բոլորովին
ուրիշ կերպ պէտք է հաշիւ տեսնել: Եվ կա-
րող է ասել՝ ինչպիսի՞ ձևակերպութիւն յա-
ռաջ կգայ, եթէ այս ժողովուրդներից մէկն
ու մէկը մեծ բազմութեամբ քրիստոնեութիւն
ընդունէ և կամենայ իւր ազգային պատմա-
կան, քաղաքակրթական առանձնայատու-
թիւններին համաձայնեցնել այդ նոր կրօնը:

Ամերիկայի ամենահիւսիսային մասում,
աշխարհիս ամենամեծ Գրեժնանդ կղզու վրայ,
Նորվեգացիք քրիստոնեական եկեղեցի էին
հաստատել և վանքեր հիմնել արդէն ԺԲ.
դարում: Բայց յետագայ ժամանակներում
այդ եկեղեցին, մայր երկրից կտրուելով՝ նսե-
մացել էր հեռոցհեռ և անհեաացել: այնպէս
որ ԺԸ. դարի սկզբին, երբ բողոքական քա-
րողիչներն առաջին անգամ այդտեղ եկան
նախկին քրիստոնեութեան նշանն անգամ
չկար: Գրեժնանդի զրեթէ բոլոր բնակիչները,
որոնց թիւը 10,000-ի է հասնում, քրիստո-

նեաներ են, մեծ մասամբ Դանիական եկեղե-
ցու հետ կապուած. ¹/₆ մասը միայն Գերմա-
նացի է կոչուած: «Եղբայրական համայնքի»
հետ Նկատողութեան արժանի մի ցաւալի
երեւոյթ է, որ այդ Էսկիմոները եւրոպական
քաղաքակրթութեան հետ շփուելով՝ սպառ-
ւում են հեռոցհեռ և միայն խառնազգիներ-
ը զիմանալ կարող են: Աւելի աչքի է ընկ-
նում այդ երեւոյթը Լորրադոր թերակղզու
վերայ, ուր 160 տարի առաջ մի քանի հա-
ղար Էսկիմոներ կային և այժմ միայն 1500
են մնացել, քրիստոնեայ դարձած: «Եղբայրա-
կան համայնքի» ջանքով: Այնտեղ մեծ թե-
րակղզու վերայ, որ ինչքան բուսականութեամբ
աղքատ է՝ նոյնքան հարուստ է հանքային
բերքերով: Ռուսաց տիրապետութեան ժամա-
նակից մնացել է Օրթոդոքս եկեղեցուց առա-
քելութիւն. յետոյ աւելացել են նաև Կաթո-
լիկ եկեղեցուց ու տասնեակ բողոքական հա-
մայնքների ներկայացուցիչներ: Ինչ Միացեալ
Նահանգների կամ սահմանակից երկիրների
ու Անտիլեան կղզիների հնդկիկներին է վերա-
բերում՝ յայտնի է, թէ ինչպէս տմարդի
կարելի է ասել զազանական կերպով վարուե-
ցան նոցա հետ առաջին անգամ այդ տեղերը
զաղթող եւրոպացիները, որով և բուռն ա-
տելութիւն յառաջ բերին իրենց կրօնի՝ քրիս-
տոնեութեան դէմ: Կաթոլիկ պետութիւնների
իշխանութեան ներքոյ զանաւոր երկիրները
երկար ժամանակ անմատչելի են եղել բողո-
քական միսսիոնարների համար, շատ տեղեր
կաթոլիկ եկեղեցին ինչպէս հնդկիկներին, այն-
պէս և մանաւանդ սարուկ նեղրներին ստիպ-
մամբ քրիստոնեութիւն է ընդունել տուել, բայց
ճշումը վերանայուց յետոյ նոքա մեծ մասամբ
նորոգել են իրենց հեթանոսական սովորու-
թիւններն ու պաշտամունքը, և աւելի եռան-
դով անձնատուր եղել նոցա: Այժմ սոցա մէջ
ամենից աւելի գործում են հարկաւ Միա-
յեալ Նահանգներից ելած միսսիոնարները, բայց
պակաս չեն և ուրիշները: յիշեալ «Եղբայրա-
կան համայնքն» օրինակ միայն Արեւմ. Հընդ-
կաստանում 42,000 մկրտեալներից բաղկա-
ցած հօտ ունի: Նոյն համայնքին պատկանում
են Հար. Ամերիկայի Գուիանա կոչուած երկը-
րում, որ Բրազիլիոյ և Վենեսուէլլայի հասար-
ակապետութեանց մէջ է ընկնում և եւրոպ.
3 պետութեանց է պատկանում 28,000 հոգի
հեթանոսութիւնից դարձած նեղրներ և
հնդկիկներ՝ քաղաքականապէս Հոլլանդացուց
հպատակ: Պէտք է նկատել, որ չնայած Նոյն
համայնքը մէկ ու կէս դար առաջ է սկսել
իւր գործունէութիւնը այս հեթանոսների

* Հանգուցեալը շատ սիրալիր կերպով ընկունեց ինձ
անցեալ արի և իւր պարզ յարաբերութեամբ ու լայն քա-
ղաքաներով շատ պարծիկ և իւր սպառնութիւն բողոք
գրաս:

մէջ, բայց նորան չի յաջողուում մինչև այժմ այնպիսի հաստատուն համայնական կազմակերպութիւն տալ նոցա որ իրենք կառավարուել կարողանան և մայր եկեղեցւոց նիւթական նպաստներ ստանալու կարիք չունենան: Ամէնից մեծ դժուարութիւն ներկայացնում է ստրկութիւնից ազատուած նեղրներին կամաւոր աշխատութիւն սովորեցնելու գործը. երկար ժամանակեայ բռնութիւնն այնչափ ստելի է դարձրել նոցա ամեն աշխատանք, որ շատ ժամանակ պէտք է մինչև դուրս բարոյական արժէքն ըմբռնելու ընդունակ լինին:

Ինչպէս որ Աֆրիկայում իշխող պետութեանց սահմանադէրը քարտեզի վերայ բազմազան գոյների իրար մէջ հիւստում մի խառն ցանց են ներկայացնում, այնպէս և այս ցամաքի վերայ գործող միասինարական ընկերութեանց գործունէութեան սահմանները ուստի դժուար է նոցա մասին մի ամփոփ ընդհանուր գաղափար տալ: Աֆրիկան երկար ժամանակ անհետաքրքրական և անձանօթ մի երկիր էր եւրոպացւոց համար. դեռ սորանից մի դար առաջ նորա ծովափնեայ մասերը միայն փոքր ի շատ, յայտնի էին և շատ քիչ տեղեր գաղթավայր դարձած: Իսկական հետազոտութիւններն ու աշխարհակալութիւնները սկսուեցան ներկայ դարու քառասնական թուականներին, և այժմ արդէն գրեթէ ամբողջ երկիրը եւրոպացւոց ձեռքն է՝ ամենաընդարձակ և ցանկալի մի գաղթավայր, մանաւանդ Դերմանացւոց համար, որոնք անցեալ դարերում միջոց չէին ունեցել մայր երկրից դուրս ելնելու և օտար աշխարհներում տեղի ունեցող մեծ աւարտութեան մէջ իրենց բաժինը վաստակելու: Մինչև այս դարու սկիզբները Աֆրիկայի գլխաւոր արդիւնաբերութիւնը եղել էր սեւ ապրանքը՝ Ամերիկայի դաշտավայրերը մշակելու համար արտահանուող ստրուկները. բնականաբար քիչ մարդիկ կգրտնուէին քրիստոնէութիւն քարոզելու մի ժողովրդի մէջ, որ վաճառքի առարկայ էր համարուում: Թէև անյաջող փորձեր շատ առաջ եղել են, բայց միասինարները հաստատ ոտք են գնում այստեղ միայն հակաստրկական շարժումն սկսուելուց յետոյ: Այժմ քանի որ գրեթէ բոլոր ցամաքը մատչելի է դարձել եւրոպացիների համար՝ բոլոր տեղերում և գործում են այլ և այլ միասինարական ընկերութիւններ, և մի քանի մասերում՝ օրինակ Կապանդիայում և Հար. արեւմ. Աֆրիկայի Դերմանացւոց պատկանած գաւառներում այնչափ յառաջ են գնացել, որ տասնեակ հազար

նորագարձներ ինքնուրոյն համայնքներ են կազմում և առանց արտաքին օգնութեան կառավարուում: Զրիստոնէական գաղափարների տարածուելուն դէմ մեծ խոչընդոտ է գեոսայն իշխող հայեացքը՝ թէ սեւամորթ բնիկները մարդկային արժանիքից ստոր արարածներ են և նոցա հետ իբրեւ անասունների հետ պէտք է վարուել: Այդպէս օր. Տրանսվալ անունով երկրում որ իր մէջ գտնուած ոսկու հարուստ հանքերի շնորհիւ շատ շուտ յառաջ գնաց և աղատ անկախ հասարակականութիւն կազմեց՝ արիւղեառող ըոներները ոչ մի իրաւունք չեն տալիս բնիկներին, նոյն իսկ ամենափոքր սեփականութեան իրաւունք, և ուրեմն իրօք նոցա ամենադառն ստրկական վիճակի մէջ են պահում: Զրիստոնէութիւնն այնուամենայնիւ տարածուում է ամենայն արագութեամբ: Հարկաւ ձեռք բերած յաջողութիւնները չնչին են՝ այն գործի համեմատութեամբ, որ մնում է դեռ կատարել: Աֆրիկայի 164 միլիոն բնակիչներից 126 միլիոնը հեթանոս է դեռ, մինչ Ամերիկայում 122 միլիոնից 14 միլիոնն է միայն հեթանոս:

Աւստրալիայում գերմանացի միսինարներ գրեթէ չկան. Պրետորիերեան եկեղեցին է գործում՝ այգտեղ զլխաւորապէս և քաղաքակրթութեան տարածուելուն հետ զուգընթացաբար յառաջ գնում:

Ասիական երկրներին դայով ուր քրիստոնէութիւնը ոչ թէ դատարկ գետնի վերայ պէտք է իւր շէնքը կառուցանէ, այլ բազմադարեան շինուածների փլատակների վերայ՝ առաջին տեղը միասինարական տեսակէտից բռնում է Հնդկաստանը: Հրաշալիքներով ու ծայրահեղ հակադրութիւններով լի մի ահագին աշխարհ: Քաղաքակրթութիւնն այս աշխարհում մեծամեծ քայլեր է արել արդէն. բայց միւս կողմից նորա դէմ եղած պատնէշներն աւելի հաստատուն են գուցէ այստեղ, քան ուրիշ որ և է տեղ: Բաւական է միայն հնդկական կաստաները յիշել: Հնդկաստանն ամենահին և ամենակարեւոր զաւառներից մէկն է քրիստոնէական առաքելութեան համար, և բազմաթիւ տմեն կարգի միասինարական ընկերութիւններ գործում են այժմ այնտեղ. բայց յաջողութիւնը չի կարելի շատ մեծ համարել. բնակիչներից 72% ըրահմայական են, 3,23% զիւապաշտ, 20% մահմեդական և միայն $\frac{1}{3}$ % կամ 2,036,000 հոգի քրիստոնեայ: այն ևս մեծ մասամբ կաթոլիկ՝ միայն 584,307 հոգի բողոքական: Սակայն քրիստոնէութեան ազդեցութիւնը միայն այդ սակաւութիւ հաւատացեալների վերայ չի երևում:

այլ ընդհանուր ժողովրդեան մի շարք միասակար սովորութիւններ այդ ազդեցութեան շնորհիւ վերանում են վարք ու բարքն ազնուանում և վերացում կարելի է համարել օր. այրիներին այրելու սովորութիւնը նուազում է մանուկ ամուսնացողների թիւը: Պէտք է նկատել, որ Հնդկաստանում 2,201,404 հոգի կան 5 - 9 տարեկան հասակում ամուսնացած և նոցանից 64,040 արդէն այրիացած:

Ներկորդ երկիրն է Չինաստանը որտեղ միսիոնարները նոյն չափով յառաջ են գնում ինչ չափով բացուում է նա եւրոպացիներին առաջ: Օրինակ նորերս երբ գերմանացիք մի նաւահանգիստ իւր շրջակայքով դրաւեցին անմիջապէս միսսիոնարներ ևս ուղարկուեցան նոր հպատակներին նուաճելու աւետարանի համար: Սակայն Չինաստանում քրիստոնէութիւնը դեռ շատ նեղ սահմանների մէջ է փակուած և դժուար է ասել թէ ինչպիսի ապագայ է բացուում նորա համար: Մի քանի տարի առաջ շատերը մեծ ակնկալութիւններ ունէին մանաւանդ Ճապոնիայի վերաբերմամբ, որ այնպիսի մեծ եռանդով ընդգրկեց եւրոպական քաղաքակրթութիւնը և կարճ միջոցում այնչափ յառաջ գնաց բայց այժմ երեւում է, որ խիստ ետաւոր ու շահագէտ Ճապոնացին նոյն բմբռնողութիւնը և համակրութիւնը ցոյց չէ տալիս քրիստոնէութեան վսեմ գաղափարների և բարձր բարոյականութեան ինչպէս եւրոպական գիտութեան և արուեստների համար:

Մեզ այնպէս է թուում թէ առհասարակ եւրոպացւոց միսսիոնի անյաջողութեան գլխաւոր պատճառներից մէկն այն է, որ նոքա ոչ թէ զուտ աւետարան քարոզելու են ելնում ինչպէս հաւատացնում են գրեթէ ամէնքը և ինչպէս անում էին Բրիտոսի իսկական առաքելները, այլ որոշ քաղաքակրթական ազդային երկրարանական պայմանների համաձայն որոշ կազմակերպութիւն ստացած մի քրիստոնէութիւն՝ հաւատացեալներ որոնելով ոչ թէ Բրիտոսի գաղափարական եկեղեցու, այլ այս կամ այն քաղաքական եկեղեցու համար: Կաթոլիկ միսսիոնարը պահանջում է, որ նեղին ու հնդկը նոյն պաշտամունքները կատարեն նոյն կերպ հաւատան պատկի անսխալականութեան ինչպէս մի իտալացի բողոքականը սովորեցնում է ձեռները նոյն ձեւով ծալել, նոյն աղօթքներն ասել ու դաւանաբանական ճշմարտութիւնները կրկնել ինչ որ անգլիացու և գերմանացու համար է: ամէնքը արտաքին կազմին գրեթէ ներքին բովանդակութեան հաւասար նշանա-

կութիւն են տալիս և համեմատաբար շատ քիչ ուշադրութիւն են դարձնում թէ այդ արտաքինը որչափ համապատասխան է իրենց այցելած ժողովուրդների արտաքինին: Առաքելներն այդպէս չէին վարուում: Նոքա ձգում էին խմորը և լծողնում էին, որ նա ինքն իրեն համար շրջապատող նիւթից զանգում կազմէ: Մասնաւոր եկեղեցիների բոլոր մեծ հիմնադիրներն առաջին դարերում գիտում էին թէ ինչ ընդունակութիւններ ինչ կրօնական զգացումներ և բարոյական գաղափարներ է բերում մի ժողովուրդ իւր հետ, որ քրիստոնէութեան համակերպիլ կարող է կոտան լինել քրիստ. գաղափարների համար և այդպիսի բնական ու հաստատուն հիմքի վերայ էին կառուցանում իրենց շէնքը: Դորանով չենք կամենում ասել ի հարկէ, թէ աւետարանը նուաստացնելու իւրաքանչիւր ժողովուրդի ծաշակին ու բարքին յարմարեցնել պէտք է, այլ թէ ճանապարհ պէտք է գտնել աւետարանի այն գաղափարների համար, որոնք հանրամարդկային են և տիեզերական ուշադրութեամբ քննելի թէ ինչ կողմերով հակումն է ցոյց տալիս մի ժողովուրդ գէպի աւետարանական ճշմարտութիւնն ու սրբութիւնը, այդ կողմերից գործ սկսել և թոյլ տալ, որ մնացածն ինքն իրեն ձեւակերպուի: Որչափ հակառակ է միսսիոնարների մեծամասնութեան ընթացքն այս գաղափարին աչքի է ընկնում մանաւանդ այն դէպքում երբ նոքա հին քրիստոնէայ համայնքներից մէկի հետ գործ ունին և իրր թէ թմրութիւնից զարթեցնել են կամենում նորան: Փոխանակ կատարելու այն ինչ որ ըստ երեւութին իրենց նպատակը պէտք է լինէր՝ վերականգնացնելու և արծարծելու արդէն եղած քրիստոնէութիւնը, նոքա քանդել են աշխատում դարկրով՝ հազարաւոր նահատակների անձնագոհ աշխատութեամբ, կառուցած շէնքը, որպէսզի տեղը մի նորը, իբր թէ աւելի լաւ կառուցանեն և այդպէս յառաջ են բերում այնպիսի վատառողջ աղանդաւոր երեւոյթներ, ինչպիսին ներկայացնում են օր. հայութիւնից ի բողոքականութիւն դարձաները:

Ներկայումս գերմանական զանազան ընկերութիւնների պատկանող միսսիոնարների ընդհանուր թիւն է 731, որոնք 456 գլխաւոր կայարաններ ունին և 316,088 մկրտուածներ են հաշուում: Նոր մկրտուողները 1896 թ.-ին մօտ 14000 էին, և 71,158 մանուկներ յաճախում էին միսսիոնարների դպրոցները: Տարեկան մօտ 6 միլիոն մարդ դուրս է արւում Դերմանիայից միսսիոնարական գործի

համար: Եթէ ի նկատի ունենանք, որ այս բնորը գրեթէ այս դարի ընթացքում է յառաջ եկել՝ պէտք է յուսալ, որ ապագան անհամեմատ աւելի յաջող կլինի և աւելի բախաւոր հիմունքների վերայ հաստատուած:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՆԵՐ ՊԷՏՔ ԵՆ.

Արարատի փետրուար 9.-ում մեր արած դիտողութիւնները հոգեւորականութեան մասին մամուլի ներքոյ էին դեռ, երբ Տփլիսի պարբերական թերթերի մէջ քանակուով նիւթ եղաւ այն հարցը, թէ արժէ՞ արդեօք, որ ուսումն առած Խաչէլէ՞ն մարդիկ եկեղեցական ասպարէզ մտնեն: Մեզ համար ուրախալի էր այս դէպքում հակառակ կուսակցութիւնների գրեթէ միաձայն ըողորը վէժի առիթ եղող անհեթեթ կարծիքի դէմ-քայց ըստ ինքեան լուրջ խորհրդածութիւնների արժանի խնդիր է նոյն իսկ այն տխուր հանգամանքը, որ այդպիսի կարծիք յառաջ գալ եւ հրապարակաւ արտայայտուել կարող էր, որ այնուամենայնիւ շատ մարդիկ կան մեզանում՝ այն համոզման տէր, թէ ապահովուած, ուսումն եւ պատիւ ունեցող մարդը հոգեւորական պէտք է չլինի, որովհետեւ հայ հոգեւորականութիւնն անշահ ընկած է, որովհետեւ լաւերն իբր հալածուած են այդտեղ եւ ոչինչ օգուտ այլեւս բերել չեն կարող: Եւ սակայն եթէ մենք, այդ քանակը ունի մէջ չմտնելով՝ աւելի կարեւոր ենք համարում հարցն ուրիշ կերպ դնել եւ կրկին միւս անգամ քննել, թէ ինչպիսի մարդիկ են պահանջուում՝ եկեղ. ասպարիզի համար՝ պատճառն այն է, որ նաեւ հակառակ կարծիք պաշտպանող մեծամասնութեան մէջ որչափ գիտենք այն հայեացքն է տիրապետում, թէ հոգեւորականութեան էրէզ էրէզ—ն է յի-

ւ—է լ—ն—ն—ն—ն էրէզ էրէզ—ն, եւ միայն մեզանում՝ մեր այս խաւար էրէզ էրէզ աշխարհում՝ զգալի է դեռ նորա պէտքը. ո՛չ հարկաւ նորա համար, որ իւր բուն նպատակին, այլ որ հասարակութեան օգտին ծառայէ:—Ամեն ազգի եւ հասարակութեան մէջ կանոնին մարդիկ, որոնց համար խաղ է ծայրահեղ կարծիքներ յայտնելը, առհասարակ ամեն հաստատութեան, եւ մասնաւորապէս եկեղեցւոյ մասին, որովհետեւ կորցնելու ոչինչ չունին նոքա եւ միայն դիւրին ծանապարհ են որոնում՝ իրենց վերայ ուշադրութիւն հրաւիրելու. իսկ եկեղեցւոյ եւ հոգեւորականութեան մասին խօսելուց աւելի դիւրին քան չկայ՝ ամեն ոք անպատիժ կերպով ասել կարող է այստեղ ինչ կուզէ: Զուր կլինէր ջանալ այդպիսիներին քան հասկացնել, պէտք է հասարակութեան աւելի լուրջ եւ գործի էութեամբ հետաքրքրուող մասի այն կարծիքներն ուշադրութեան առնել, որոնցով դոքա երես են առնում՝ հրապարակ ելնելու. իսկ հոգեւորականութեան խնդրում՝ այդ մոլար կարծիքներից ամենավտանգաւորն է, ասում ենք՝ այն, թէ հոգեւորականը եկեղեցուն պէտք է չծառայէ, այլ հասարակութեանը, եւ ուրեմն նորա գոյութիւնը իրաւացի է այն դէպքում միայն, երբ հասարակութիւնը անկատար կազմակերպութիւն ունի, իւր ինչ ինչ պէտքերը լրացնելու համար ստիպուած է թոյլ տալ, որ մի խումբ մարդիկ եկեղեցական տարագ հագնեն: Այստեղից յառաջ է գալիս նաեւ այն մոլար եզրակացութիւնը, թէ ուրեմն հոգեւորականը պատրաստուած պէտք է լինի հասարակութեան պէտքերի համեմատ՝ բժշկութիւն, երկրագործութիւն, այլ եւ այլ արհեստներ եւ գիտութիւններ սովորի, իսկ այն արհեստն ու գիտութիւնը, որ պահանջուում է եկեղեցւում՝ պաշտօն վարելու համար՝ կարող է, իբրեւ աւելորդ զարդ, չունենալ իսկ: Եւ այս ամէնը յենուում է այն երեւակայեալ փաստի վերայ, իբր լուսաւորեալ Եւրոպայում՝ այդպէս է. իբր այնտեղ հոգեւորականի պէտք չեն զգում՝ կամ՝ ուր զգում են, լեցնում են այդ պէտքը բժիշկ, երկրագործ եւլն, հոգեւորականներ պատրաստելով:

Այդպէս է միթէ: Պէտք է խոստովանած, որ Եւրոպայում եւս մենք շատ անգամ